ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-7-Ը ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ավստրիայի Հանրապետություն (ք.Վիեննա) / 2019թ. դեկտեմբերի 5-7-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ հիմնարկ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցել «Գերմանահայկական հիմնադրամի» (GAF) դիտորդ խորհրդի հերթական նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Խորհրդի հերթական նիստի ընթացքում քննարկվեց «Գերմանահայկական հիմնադրամի» ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև՝ KfW բանկի հետ իրականացվող ընթացիկ ծրագրերի կատարողականներն ու վերջիններիս հնարավոր զարգացումները՝ վերականգնվող էներգետիկայի և այլ ոլորտներում (հիփոթեքային շուկայի զարգացման համար բնակարանային ֆինանսավորման, գյուղատնտեսության և ՓՄՁ զարգացման ֆինանսավորման ծրագրերի վերաբերյալ):

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Նիստի ընթացքում ելույթ ունեցա Հայաստանում վերականգնվող էներգետիկայի վերջին զարգացումների վերաբերյալ և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրվող մինչև 5 ՄՎտ հզորության արևային ՖՎ կայանների լիցենզիաների պահանջարկի նկատմամբ շուկայում տիրող իրավիճակի վերաբերյալ:
   Ներկայացրել եմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դիրքորոշումը՝ ընդհանուր արտադրությունում վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի ավելացումը խրախուսելու վերաբերյալ, որը կխթանի ներմուծվող էներգակիրներից կախվածության մեղմացումը:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանն ու KfW բանկի տարածաշրջանային տնօրեն Օլաֆ Զիմելկան ստորագրել են երեք նոր վարկային համաձայնագիր՝ 60 մլն եվրո ընդհանուր գումարով:

Երրորդ համաձայնագիրը դարձյալ կազմում է 20 մլն եվրո՝ «Վերականգնվող էներգետիկայի խրախուսում» ծրագրի հերթական փուլի իրականացման, ինչպես նաև այս ոլորտում ներդրումների խրախուսման նպատակով:
Վարկը «Գերմանահայկական հիմնադրամի» և տեղական բանկերի միջոցով կտրամադրվի համապատասխան գործունեություն ծավալողներին:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հաշվի առնելով աճող պահանջարկը և վերականգնվող էներգետիկայի զարգացման կարևորությունը՝ առաջարկել եմ հաջորդ հատկացման համար վերականգնվող էներգետիկային տրամադրվող վարկերի մասը նախատեսել 50 մլն. դոլար:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

10 դեկտեմբերի 2019թ.